



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ  
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ  
ԶԱՐՄԱՅՐ ՔԱԶԱՆԱՅ ԿԷՋԻՐԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 8 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1911

ԹԻԻ 39

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԹՈՍԻՆ ԽՆԴԻՐԸ. — Առաջիկայ ընտրու-  
թեան առթիւ (Գ.)

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ. — Այլըն լուսն

ՍԻՆՔՈՍ ԴՊՐՈՑ. — (Ե.) Մատենագրութիւն Սինեաց

ԹԵԼԱԴՐԻՉ ՊԼՏՄՈՒԹԻՆՆԵՐ. — Բոլո՛ր սիրտով

ՀԱՅ ՄԱՐՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. — Շուշան

ՅՈՒԼԻՈՍ ԵՒ ՊՍԷԻԼԻՈՍ. — Առաջին քրիստոնեա-  
նեան ժամանակուան պատմութիւն (Շար.)

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ. — Շաբթուան կարեւոր լուրեր  
Անդրանիկ Հայ դրամատան բացումը  
Նուբարապոլսի թանգարաններ

ԱՐՇԱԿ Ա. ԱԼՊՅԱՆ

ԳՐԻԳՈՐԻՍ

ԳՆԷԼ Մ. Վ. ԳԱԼԵՄԵԼԻԱՆ

ԹՐԳՄ. ԱՆԳԼԻԵՐԷՆԷ

ԳՐ. ԳԱՊԷՆՃԵԱՆ

ԼԵՐՆ ԹՈՂՍԹՈՑ

« ՏԱՃԱՐ » ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է  
ղինկ առ Զարմայր Բանանայ Կեղիւեան, Կ. Պոլիս, Պեհլիքաւ, Հայոց եկեղեցի:

بشيكطاش اره في كليسا سنده « داجار » غزتمى مديرى پاپاس زارماير افندي

Rev. Père Zarmair Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»  
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

# “ՏԱՃԱՐ”Ի

## ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հինգ բաժանորդ գնանոցը իրաւունք ունի մէկ թերթ ձգիստանալու

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԵՐ ԿԱՆԻՍԻԿՈՍԵՆ  
ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ’ԸՆԴՈՒՆՈՒՆՈՒՆ ԴԻՐԱՄԱՍՏՁԵՎԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԵՐԻՆ

|                          |            |
|--------------------------|------------|
| Պոստի և Գաղտնայի տարեկան | 40 դրու    |
| Արտասահմանի համար        | » 10 Ժրանգ |
| Ռուսիա                   | » 4 բուլլի |
| Ամերիկա                  | » 2 օղար   |
| Ձեռքի կը ծախուի տրակը    | 40 փարա    |

### ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

« ՏԱՃԱՐ » ԿՐՕՆԱԹԵՐԹ

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. Փոխա-  
նորդ Տ. Արսէն Բհնյ. Դերձակեան  
ԱՂԵՔՍՏՆԴՐԻՍ. — Տ. Ռուբէն Բհնյ. Գա-  
րիկեան

ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պա-  
ղոս Վրդ. Գաֆթանեան

ԱՅՆԹԱՊ. — Տ. Գարեղին Բհնյ. Պողար-  
եան

ԱՖԻՕՆ ԴԱՐԱՀԻՍՍԱՐ. — Տ. Խաչատուր  
Ա. Բհնյ. Տօնէլեան

ԲԱՐԵՐԴ. — ՄԱՅ Ամանտեան Էֆ.

ԴԱՂԱՏԻՍ. — ՄԱՅԱՆՈՐԴ Տ. Թարգէն Եսս.  
Կիւլէսէրեան

ԴԱՀԻՐԷ. — Տ. Յանքիւն Բհնյ. Սար-  
գիսեան

ԵՕՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Եսսիկ  
Դիմաքսեան

ԵՐՁՆԿԱ. — Տ. Մեարոպ Բհնյ. Թորոսեան

ՉՄԻՌՆԻՒԱ. — Տ. Յարութիւն Բհնյ. Տ.  
Սարգսեան

ԷՍԿԻ ՇԷՀԻՐ. — Տ. Գալուստ Բհնյ. Տ.  
Դալուստեան

ԿԱՐԷ. — Առաջն. փոխանորդ Տ. Գրիգոր  
Ա. Բհնյ. Մանուկեան

ԿԻՐԱՍՍՆ. — Տ. Մանուկեան Բհնյ. Սար-  
գիսեան

ՄԱՐՍԷ. — Տ. Հմայեակ Բհնյ. Վարժա-  
պետեան

ՄԱՐՁՈՒԱՆ. — Յակոբ Էֆ. Սրապեան  
ՆԻԿՈՄԻՏԻԱ. — Տ. Ոսկի Բհնյ. Պիպիեան

Շ. ԴԱՐԱՀԻՍՍԱՐ. — Տ. Նաթան Բհնյ.  
Տառնեան

ՈՒՇԱՔ. — Յարութիւն Բհնյ. Աստուրսեան

ՊՐՈԼՍԱ. — Առաջն. Տեղապահ Տ. Վար-  
դան Ս. Վ. Դասպարեան

ՊԱՆՏՐԱՍ. ՊԱՆԲԷՍԻՐ. — Տ. Կուսի Բհ.  
Ֆիլիպեան

ՊԱՂԱՏ. — Առաջն. Տ. Մովսէս Ս.  
Եսսիկ. Կէօսիւքեան

ՌՈՒՍՏՈՒՔ. — Տ. Միլիտի Բհնյ. Մըրչ-  
իկեան

ՌՈՏՈՍԹՈ. — Առաջնորդ Տ. Գէորգ Ս.  
Վրդ. Սալանեան

ՍԵՐԱՅԵՏԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ.  
Պիպի Բհնյ. Օտարսեան

ՍԵՐԱՅԵՏԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ.  
Պիպի Բհնյ. Օտարսեան

ՏԵՂԱՆԿԵՐՏ. — Դալիթ Էֆ. Մովսէս-  
եան

ՓԱՐԻՉ. — Հոգեւոր Տեառն Տ. Կառնա-  
պետ

ՔԻՐ. — Առաջն. Տ. Պիպի Բհնյ. Սար-  
գիսեան

ՅԵՐՁՆՈ. — Յակոբ Էֆ. Սրապեան

Rev. Père Nazarian, Rédacteur de la Revue «DADJAR»  
Constantinople, Église Arménienne.



## ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԿՐԾՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 8 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1911

ԹԻԻ 39

### ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴԻՐ

(ԱՌԱՋԻՆԿԱՅ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ)

Դ. (')

Բ. Կալուածներ.— Ըստ Պալատէնիայի տրամադրութեան, վանականները իրենց պատկանած վանքին անունով միայն կալուածներ կրնան առնել (յօդ. 89): Կաթողիկոսին, Առաջնորդաց եւ Փոխանորդներու գոյքերը եւ հարստութիւնը սեպհականութիւնը կը դառնան էջմիածնայ (ըստ տրամադրութեան սրբազրեալ 71րդ յօդ. ղաւածին Պալատէնիայի): Ռուսիոյ Հայ մեհաստանները, եկեղեցիները ունին կալուածներ եւ կրնան նորեր ալ ստանալ կըտակներով եւ նուիրատուութիւններով, եթէ բարձրագոյն թոյլատուութիւն ըլլայ (յօդ. 9): Դարձեալ Հայ եկեղեցիները եւ վանքերը կրնան նուիրատուութիւններ ստանալ եւ գրամաղուխ մը զոյացած աւտեն, գրամատուն զննելով տոկոս առնել (յօդ. 119):

(1) Շար. 34րդ Թիւն:

Բոլոր այս սեպհականութիւնները, «չարժական կամ անչարժ ստացուածք նախա-նշանակեալ ի պահպանութիւն ո եւ իցէ Լուսաւորչական Հայոց մեհաստանի կամ եկեղեցւոյ կամ նոցին վերաբերեալ ստա-ուածահաճոյ շինուածաց՝ հարկաւ ընդհա-նուր ստացուած Լուսաւորչական եկեղեցւոյն Հայոց» (յօդ. 117):

Հայ եկեղեցւոյ գերագոյն Պետը Կաթողիկոսը ըլլալով, նոյն այդ Պալատէնիայի տրամադրութեամբ, պահպանին է Հայ եկեղեցւոյ կալուածներուն, որոնք կը մատակարարուին ժողովուրդին ձեռքով, Կաթողիկոսին վերին հսկողութեան տակ:

Ռուս կառավարութիւնը երբեմն կարծելով թէ Հայ եկեղեցին Բիւզանդական ճախութիւններու տէր դարձած է եւ տընտեսական լաւագոյն դրութեան մը մէջ կը գտնուի, Կաթիցիսեան թելադրութեամբ, ընկճելու համար Հայ եկեղեցին ու Հայ տարրը ամբողջութեամբ, 1903ին ռեւզով մը Հայ եկեղեցւոյ սեպհական կալուածնե-րու մատակարարութիւնը ինքն ստանձնեց: Այս կարգադրութեան դէմ բռնուն ընդդի-մութիւն ցոյց տուաւ Խրիմեան Կաթողի-կոս, եւ Հայերը բնաւ չհամակերպեցան կառավարութեան այս կարգադրութեան:

դիւցազնական անձնութիւն թեամբ մը : 1905ին ներքին յեղափոխական բռնկումներ եւ Կալիցիոնի անկումը , պետական հայեացքներու մէջ փոփոխութիւն առաջ բերին , եւ Հայ Եկեղեցւոյ կալուածները վերադարձուցան Ազգին :

Սակայն հիմա ռեաֆորմի շրջանին մէջ ապրող ոռւս կառավարութիւնը կրնայ յետադարձ անօրինութիւններ ընել , եւ նախորդ ուղղութիւնի քայլեր առնել : Պէտք է ուշադրութիւնէ չվրկացնել թէ Ռուս կառավարութիւնը իր նախորդ անօրինութեան իբր զխաւոր պատճառ եւ արդարացում , ցոյց կուտար Հայ եկեղեցական եւ զպրոցական կալուածներու իրենց նըպատակին չծառայելը եւ զեղծումներ գործուիլը :

Ռուս կառավարութեան ակնարկած նպատակի շեղումը յայտնի է թէ ի՞նչ բանի մէջ կը կայանար : Հիմա ալ յեղափոխական նպատակներու ծառայելու զազափարին դէմ է ռեաֆորմիստական վարչութիւնը , հետեւաբար կալուածներու մատակարարութեան համար որքան աչալուրջ եւ խիստ հսկողութիւն գործադրուի , կ'արժէ : Հայոց ազազայ կաթողիկոսը այս անսակէտով պարտաւորուած է խրիմեանի եւ իլժիրիեանի օրով մշակուած թեմական ժողովներու եւ խորհուրդներու կազմութեան ուժ տալ , հակակշիռի աւելի հաստատուն ձեւ մը հաստատելու համար : Հակառակ պարագային աղիտաբեր է հետեւեալները : Կալուածական մատակարարութիւնը Հայ Եկեղեցւոյ վարչութիւնէն անջատել արդէն իսկ ջնջումն է Հայ ազգային ներքին , կրօնական-կրթական ինքնավարութեան , եւ հետեւաբար կաթողիկոսին աշխարհիկ-քաղաքային իրաւասութեան :

Հայ Եկեղեցւոյ զաւակները զրկել իր զպրոցներուն նիւթականը հոգալով իջողէն , այդ կրթական հաստատութիւնները փճացնել պիտի նշանակէ : Զրկել Հայ Եկեղեցւոյ զաւակները իրենց եկեղեցին չէն պահելու եւ զարգացնելու միջոցներէն , զայն ջնջելու համազօր պիտի ըլլայ :

Ապագայ կաթողիկոսէն ամէն բանէ

առաջ կը սպասուի որ այս նիւթական-տնտեսական մատակարարութեան համար կառավարութեան հետ լաւակցութեամբ ըստեղծէ այնպիսի ձեւ մը որ կասկածէ զերծ ըլլալով հանդերձ , կղերական սակաւագումութեան մը միջոցներէն չըլլայ , այլ ազգային լայն խաւերու կամքով մատակարարուի եւ խիստ հակակշիռի տակ մնայ : Առանց այս կազմակերպութեան միջոց կասկածի աւելի կրնայ տալ եւ վտանգուել Ռուսահայոց ազգային ներքին ինքնավար զարգացումը :

Դ. Աւուսնական դասեր. — Ամուսնական դատերու քննութիւնը կաթողիկոսին քաղաքային իրաւասութեանց ամէնէն զըխաւորներէն մէկը կը կազմէ : Մինչեւ 1903, կաթողիկոսը իր խզին եւ համազումներուն համաձայն վճիռ կուտար ամուսնական դատերու համար , որոնց նախնական քննութիւնը ի Ռուսիա կը կատարուէր : Սինօղին մէջ եւ ի Թուրքիա՝ Կրօն. Ժողովին մէջ , Սինօղին նախաքննիչ ատեաններն էին Կոնստանտնուպոլսի , եւ Կրօն. Ժողովին՝ Դասաստանական Խորհուրդը :

1899 Մարտ 4ին կառավարիչ Մերակոյտին մէկ ուրազը այս կարգը կը փոխէր , եւ հակառակ խրիմեան կաթողիկոսի ըզոքին , Սինօղին իրաւասութեանները կ'ընդարձակուէին , ի վնաս կաթողիկոսական իշխանութեան :

Այս կարգադրութեան համաձայն Ռուսահայոց ամուսնական դատերու քննութիւնը եւ վճռատուութիւնը իբր ընթացիկ խնդիր կը սեպականուէր Սինօղին , եւ կաթողիկոսին կը մնար միայն վաւերացնել Սինօղին որոշումը :

Խրիմեան աւամայ համակերպեցաւ ի վերջոյ այս կարգադրութեան , եւ միայն հին կարգը գործադրուեցաւ Թրքահայոց ամուսնական խնդիրներուն համար , որոնք առանց Սինօղի բովէն անցնելու ուղղակի կաթողիկոսին որոշման կ'ենթարկուէին :

Ռուս կառավարութիւնը կաթողիկոսական հեղինակութիւնը կրճատող այս հրամանին շարժառիթ ցոյց կուտար Մկրտիչ կաթողիկոսի իբր թէ անձամբ անձին եւ

լայն կերպով Հայ-Լուսաւորականաց պըսակը լուծելը, յաճախ միայն մէկ շահագրգիռ կողմին խնդրանքին վրայ, վերջինին միայն տալով կրկին ամուսնութեան հրաման եւ աս առանց մինչեւ իսկ միւս կողմին իմաց տալու: (Ձեկուցագիր Ռուս նախարարութեան առ Չարն, ներկայացեալ 1908 Օգոստոս 26ին Տես Ազատականութիւն 211):

Այո կարգադրութեամբ կաթողիկոսին անձին սեպական մէկ իրաւունքը կը ջնջուէր, եւ ասով իր առանձնայատուկ դիրքը կը վնասուէր: Ամուսնական դատերու միայն Հայրապետին վճռէն կախում ունենալը, կեդրոնացում մը առաջ կը բերէր եւ անհրաժեշտ կը դարձնէր կաթողիկոսին գոյութիւնը: Ռուս կառավարութիւնը ամուսնական դատերու մէջ կաթողիկոսին գերակշիռ ու օրէնսդրական նշանակութիւնը նուազեցնելու համար, ոչ միայն կաթողիկոսին այդ հանգամանքը միտեց ու մերժեց, այլ ակելի առաջ անցնելով Մատթէոս Բ. կաթողիկոսի պաշտօնավարութեան չրջանին Պալաժէնիայի տրամաշրտութիւնները տարբեր կերպով մը մեկնելով, անոր կարեւորութիւնը աստիճան մը եւս սկիզբէն Ս. յս նոր հրահանգին համաձայն Ռուս կառավարութիւնը գաւառական Կոնստանտնուպոլսէն առանց որ եւ է պերագաս մարմինէ հաստատել տալու, իրենց որոշումները իրաւասու կը հռչակէր՝ ամուսնական դատեր ոչ միայն նախաքննելու այլ նաեւ որոշումներ ու վճիռներ տալու, եւ եթէ այդ որոշումներուն դէմ ենթակաները բողոքէին, այն ատեն միայն Սինոդը պիտի վերաքննէր Կոնստանտնուպոլսի վճիռը: Այս կերպով վերջնականապէս կաթողիկոսին ունեցած հեղինակութիւնը ոչ միայն կը ջնջուէր՝ այլեւ նոր վտանգ մը ծագում կ'առնէր:

Հայրապետը առաջ իր խղճին անսալով անձնապէս կը անօրինէր, եւ իր տուած վճիռը իբր անձնական կարգադրութիւն չէր կրնար խնդրոյ առարկայ ըլլալ: Սինոդը նախընթացներու վրայ հիմնուած որոշումներ կուտայր, իսկ Կոնստանտնուպոլսէն չուրանալով իրենց առջեւ որոշ օրէնքներ,

թերիս իրարու պիտի հակասեն, եւ տեղի պիտի տան որ անհասկեր նոյնիսկ կառավարութեան բողոքեն:

Այդ բողոքները իբր սքանչելի առիթ մը, կրնան ծառայել Ռուս կառավարութեան, վերջին վճռական քայլ մըն ալ առնելու եւ քաղաքացիական այս գործողութիւնները իր ձեռքին մէջ ամփոփելու:

Հետեւաբար ապագայ կաթողիկոսը, այս դժուար կացութենէն ազգը փրկելու եւ Հայրապետական իշխանութեան այդ առանձնաշնորհը իրեն վերագործնելու համար, Պալաժէնիայի իրեն տուած օրէնսդիր ըլլալու եւ կանոններ դնելու ձեռնաստութենէն պէտք է օգտուի, եւ անմիջապէս հրատարակէ ամուսնական օրէնք մը՝ Հայ Եկեղեցւոյ կանոններուն եւ ժողովոյ որոշումներուն վրայ հիմնուած եւ արդի պահանջներուն համաձայնուած: Միւս կողմէ կաթողիկոսը պէտք է կառավարութեան առջեւ պատշաճօրէն փաստաբանէ իր իրաւասութեանց վրայ եւ անոնց վերստացմանը աշխատի:

Ահա՛ կաթողիկոսին ազգային-քաղաքական իրաւունքները, որոնց պահպանութիւնը ամենաանհրաժեշտ կարեւորութիւն ունի Ռուսահայոց համար, իբր գոյութեան խնդիր:

Անուրանալի է թէ Ռուս կառավարութիւնը մտադրած է Հայոց Եկեղեցւոյ կառավարութեան համար 1836ին խմբագրած Պալաժէնիայի վերաքննել՝ նոյնիսկ Հայոց կաթողիկոսին հետ րանակցելով, ինչպէս շատ որոշ կ'երեւայ նախարարութեան առ Չարն ուղղած զեկուցագրէն (տես պատճէն. Ազատականութիւն 211-216): Այն ատեն զլիաւորաբար Ներքին գործոց նախարարին անմիջապէս գործելու եւ կաթողիկոսին ընտրութենէն առաջ նոյնիսկ նոր Պալաժէնիա մը խմբագրելու հռահրը չափաւորած է Կովկասի պատուական փոխարքան՝ Կոմս Վարանցով Տաշքով, որ ազգային հաւանութեան պէտքը ցոյց տուած է, եւ այդ կամքին ալ արտայայտութիւնը վերապահած է ազգընտիր կաթողիկոսին: Նոյնպէս ոչ նուազ նպաստած

են Արտաքին գործոց նախարարը եւ Կ. Պոլսոյ Ռուս դեսպանը, իրենց գիտողութիւններովը, որոնք կը միաէին ու ժ տալ Կովկասի փոխարքային, Արտաքին քաղաքականութեան տեսակէտով շատ ձախող բան մը համարելով Կաթողիկոսին իրաւասութիւնները կրճատել անմիջապէս:

Ներքին գործոց նախարարին աչքին մասնաւորապէս ծանր կշռող բանը կաթողիկոսին անպատասխանատու հանգամանքն է. կ'ուզէ որ Հայոց Հայրապետը՝ ամէն բանէ առաջ Ռուս կառավարութեան կամակատարն ըլլայ: Ներքին քաղաքականութեան տեսակէտով, Ռուս կառավարութեան վարիչները անխտիր համաձայն են որ, անհաշտելի է որ Կայսրութեան մեջ գտնուի պաշտօնական անձ մը, արտերկրացի իշխանութեամբ պարուրուած, որ անաստեօեմէի ազդեցութեանը եւ բացարձակ չիստարե կառավարութեան օրինական տնօրինութեանը (Տեա. Ազատամարտ թիւ 216): Սակայն նկատելով «թէ կարելի չէ մոռնալ որ կրօնական խնդրոց հետ սերտիւ կապուած ամէն օրինական յարաբերութիւն կը պահանջէ ուշադիր ու անխտով քննութիւն մը» Պաշտօնէիայի վերաքննութիւնը կ'որոշուի կատարել «առանց ի զուր սրելու այդ խնդիրը եւ ոչ ալ Կաթողիկոսը դահլէկէջ ընելու. կամ զատի ետեւորելու հնարներ որոնելու նպատակով»: այլ հանգարտօրէն մշակելու համար այն հիմերը, որոնք կ'որոշեն այդ պաշտօնական անձին օրինական դիրքը պետութեան մէջ»:

Այս նկատումներով, Ռուս նախարարութիւնը 1908ին կ'առաջարկէ չեղաձգել Հայոց կաթողիկոսին ընտրութիւնը, իսկ ծրագրուած փոփոխութիւնը կ'որոշուի ձեռք առնել առելի հանգարտ առկա մը: Ասոր համար իբր միջոց նախարարութիւնը կ'առաջարկէ որ Ներքին գործոց նախարարութիւնը, համաձայնութեամբ Կովկասի փոխարքային եւ մասնակցութեամբ ամենայն Հայոց նորընտիր Կաթողիկոսին, մշակէ ծրագիրներ, «հաստատուելու համար այնպիսի կարգ մը՝ Հայ Էկուսաւորչական Եկեղեցիի վարչական գործերուն մէջ

ի Ռուսիա, որ ճշդիւ որոշելով Կաթողիկոսին դիրքը՝ Կայսրութեան միւս նուիրականներու շարքին մէջ, ապահովէր անոր արարքներուն իրական համաձայնութիւնը Ռուս պետական իշխանութեան օրինական պահանջներուն հետ» (Տեա. նոյն վաւերագիրը. Ազատամարտ թիւ 216):

Եւ իրապէս այդ բանակցութիւններն սկսած էին Վարանցով Տաշքովի եւ Իզմիրլեան կաթողիկոսի միջեւ: Իզմիրլեանի կաթողիկոսութիւնը անով միայն կրնայ նշանաւոր համարուիլ, որ Իզմիրլեան մեծ խոհականութեամբ, ժողովրդական-ազատական սկզբունքներու վրայ հիմնուած — ինչպէս կը պահանջէ արդէն Հայ Եկեղեցւոյ ողին — կազմակերպութեան մը հիմերը դնել ուղեւ: Կրթական խնդրոյն համար իր եւ Փոխարքային միջեւ համաձայնութիւն զոյացաւ, եւ Բեդերսպուրկ յղուած է վաւերանալու համար: Թեմական խորհուրդներու եւ Ժողովներու կազմութեան համար արդէն Իզմիրլեան կաթողիկոս Փոխարքային ներկայացուցած էր հիանալիօրէն պատճառաբանուած, ու շատ համոզիչ գրութիւն մը, եւ հաւանական է որ յարատեւ բանակցութիւններով այս մասին ալ կարգադրութիւն մը ընէր: Յետոյ մի առ մի քննուելով միւս խնդիրները, անշուշտ պիտի զանային իրենց պաշտօնաւոր լուծումը, եւ ասով լուծուած պիտի ըլլար նաեւ Պաշտօնէիայի խնդիրը, որ այդ կարգադրութեանց համաձայն սրբազրութեան պիտի նշխարուէր:

Իզմիրլեանի իբր բանակցութեանց հիմնաքար դրած սկզբունքները, հակառակ իր պաշտօնավարութեանը կարճատեւ շրջանին, կրնան զինքը մեծ կաթողիկոսներու շարքն անցընել:

Դժբաղդաբար մեր ռուսահայ եղբայրները, մեծազոյն մասամբ չկրցան հասկնալ Իզմիրլեանի սկզբունքներուն կարեւորութիւնը, վարժուած ըլլալով միապետական-կղերամիտ վարչութեան մը:

Ռուսական ազդեցութեան տակ, Ռուսահայոց մէջ, ժողովուրդը կղերի ազդեցութեան ներթարկուած է, եւ կղերը պար-

ղապէս կ'արհամարհէ ժողովուրդին ձայնն ու հեղինակութիւնը. մինչ հոգ՝ Թուրքիոյ մէջ, Աղգային Սահմանադրութեան ոգւոյն համաձայն, կղերը ստորագրուած է ժողովուրդին: Այս ոգին, բուն իսկ Հայ Եկեղեցւոյ ոգին է. քանի որ Հայ Եկեղեցւոյ մէջ, քահանայութեան մինչեւ կաթողիկոսութիւն, ընտրական սկզբունքով առաջանալու զրոյթ իւր ընդգրկուած է եւ ձեռնադրութեան արարողութեան մէջ իսկ մանկուսաստիճանն նուիրագործուած է: Ռուսիոյ մէջ խանգարուած այս կարգը վերահաստատուելու զիջ իզմիրլեանի, եւ ասոր համար կղերամիտ-յետադիմական տարրերու հաճելի չեղաւ, եւ անոնց հալածանքին ենթարկուեցաւ:

Մենք ամէն պարագայի մէջ պիտի ուզէինք որ իզմիրլեանի սկզբունքներն ընդունող մէկն ըլլար իր յաջորդը: Այն ոգւով շարունակելու համար քանակցութիւնները, որոնք անշուշտ անվրէպ կերպով վերստին պիտի սկսին նորընտիր կաթողիկոսին պաշտօնի ձեռնարկելէն անմիջապէս յետոյ: Կղերական գերակշռութեան կուսակից, միապետական հակումներով, եւ ժողովուրդին ազդեցութեան թշնամի կաթողիկոս մը, ոչ միայն իր պաշտօնավարութեան շրջանին, այլ յաջորդ ընդարձակ շրջանի մը համար աղետարեւ պիտի ըլլայ:

Այս պարագան պէտք չէ մոռնալ, եւ այս պէտք է ըլլայ զխառոր առանցքը առաջիկայ ընտրութեան մէջ:

ԱՐՇԱԿ Ա. ԱԼՊԾԱՃԵԱՆ

ՎԱՐՁԱՊԵՏ Սաիտ փաշա հրամայած է որ գաւառի ուշիմ Հայ աշակերտներէն 18 հոգի ընդունուին Հալլալըի երկրագործակոն վարժարանին եւ երկրաչափական վարժարանին մէջ:

ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ, Պատերազմ. նախարարութեան որոշմամբ, այսուհետեւ տասն օր դադար պիտի ունենան իրրեւ տօն. այն է Ծննդեան Ա. եւ Բ. օրերը, Վարդանանց տօնի օրը, Աւետման օրը (Ապրիլ 7), Աւագ Հինգաթի, Զատիկի Ա. եւ Բ. օրերը, Համարձման, Գիււտ Նշխարաց եւ Թարգմանչաց տօներուն:

## ՀՈԳՆՈՐ ԿԵԱՆՔ

### ԱՅՐԻՒՆ ԼՈՒՄԱՆ

• Եւ աշակերտները կոչելով իրեն, ըստ անոնց. ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ այս աղքատ այրին աւելի նեղեց քան զամէն որ սեակ նեղեցին գանձանակը: Մարկ. Ժ. 43

(Վաղուան հաւու Աւետարանէն)

Աւետարանական այս պարզ ու համառօտ պատմութիւնը իր մէջ կը խտացնէ մեծ ճշմարտութիւններ, զորս անկարելի է ուշադրութենէ վրիպեցնել՝ ամէն անոնց որոնք պարզ եղելութիւններու տակ իրական նպատակներու շարժառիթներ փնտռել սովոր են: Յիշուս որ առաջին մէջ քիչ առաջ Հրեայ աղղին իրեն անձին ու գործին հանդէպ ունեցած վերաբերումը՝ այդի տնկող եւ չար ծառաներուն կողմէ սիրելի որդին մեռցուող մարդուն առակով պատկերացուցած էր, որ կայսեր տուրք տալու ու եօթն եղբայրներու կնոջ փորձիչ հարցումներուն պատասխանած էր, որ դպիրներուն իր մասին ինչ գաղափար ունենալը ու անոնց այրիններուն առեւերը ուսելու անորձակն ու կեղծաւորութիւնը խտաօրէն հարուածած էր, հիմա տաճարին գաւթը, գանձանակին դիմացը, կը գլուխէր այն տեսակ գործի մը հանդէպ, որուն շարժառիթը՝ զայն գործողին հոգին հակապատկերն էր իր շուրջի կեղծիքին ու կեղծաւոր հոգիներուն: Մանաւանդ հոն իրենց ըրած բարեգործութեան հպարտցուցարարութիւնով խրոխտ հարուստներու բարեբարեւելու կերպին ու այս խոնարհ այրին համեստ կերպին միջեւ գտնուող մեծ տարբերութիւնը առիթ մըն էր անոր համար, որ նորէն արձակէր իր շանթերը՝ կեղծիքին ու չարամտութեան դէմ: Հետեւաբար հոս նախ նկատողութեան առնենք այրին լուսման, անոր իսկական արժէքը, եւ յետոյ մեր լուսմաները:

Ա. — Այրին շուրջի Յայանի է թէ այրին նեղած երկու լուսման, որ հիմակուան դրամով երեք փարա ըսել է, ինք-

նին մեծ կտրեւորութիւն ունեցող նուէր մը չէր, եւ Յիսուս իբրեւ նուէր չէր որ անոր վրայ իր աշակերտներուն ուշադրութիւնը կը հրաւիրէր, այլ այդ համեստ նուիրատուն հոգին կ'ուզէր պատկերացնել, Նախ՝ այրիին նուէրը յօծարութեամբ տրուած նուէր մըն էր: Ան կրնար գանձանակին առջեւն անցնիլ առանց նուէր տալու, որովհետեւ բնական է որ իր աղքատ այրիի կերպարանքը ուրիշներուն նուէրի ակնկալութիւն մը չէր թողուր: Բայց չէր այրին իր սրտին խորը այնչափ մեծ փափաք մը ունէր այդ նուէրը տալու, որ չկրցաւ աչք բաղձանքը անտեսել, ու սիրայօժար նետեց իր շատը, իր չքաւորութիւնէն ունեցածը, իր բոլոր ապրուստը: Ուրիշներու առեւած լիարժեք նուէրին մէջ այնչափ զոհողութիւն չկար՝ որչափ այս այրիին երկու լուծային մէջ. ուրիշներուն նուէրներուն մէջ այնչափ սիրտ ու հոգի չկար՝ որչափ այս այրիին համեստ նուէրին մէջ, ու այդ զոհողութիւնը եւ այդ հոգեկան տրամադրութիւնը անոր յօժարութեան ապացոյցն են:

Երկրորդ՝ այրիին նուիրատուութիւնը անկեղծ էր: Որովհետեւ այրին իր այդ շատ չնչին նուիրատուութիւնով պարծանքի ձեւեր մը չէր կրնար առնել, չէր կրնար ուրիշներու ուշադրութիւնը գրաւելու, ուրիշներու զովտանքին արժանանալու. յետին միտք մը ունենալ. որովհետեւ ինք ալ գիտէր իր նուէրին շատ չնչին բան մը ըլլալը, եւ հոսանքաբար շատ ամփոփալով մտաւ. գանձանակը ստակ նետողներուն շարքին մէջ. Բայց վերջապէս չէր կրցած իր այդ փափաքը լռեցնել. նետեց իր բոլոր գանձը, իր բոլոր սիրտը եւ Յիսուս որ այդ նուիրատուներու տողանցումին մէջ, ո՛չ ձեւերու եւ ոչ նուէրի քանակութեան, այլ շարժառիթներու եւ սիրտերու կը նայէր, գնահատեց անոր երկչոտ, լայց յօժար ու անկեղծ նուիրարութիւնը:

Երրորդ՝ այրիին նուիրաբերութիւնը համեստ էր: Ան իր այդ նուէրը ո՛վ գիտէ որչափ զոհողութիւնով կրցած էր խնայել. համեստօրէն առեւա՝ առանց խորհե-

լու թէ ի՛նչ կրնար ըլլալ իր այդ երկու լուծայով: Ան կրնար խորհիլ թէ նուիրատուութիւնը հարուստներու յատուկ է, անոնք են որ ունին առատ առատ ու պէտք է տան. ինքը իբրեւ, աղքատ այրի մը նուիրատու պէտք ունէր քան թէ նուէր տալու: Բայց այնպէս չխորհեցաւ, այլ մտածեց թէ իր քիչն ալ պէտք մը կրնար լինել, ու ինք ալ իր համեստ բաժինը բերելով կրնար խոնարհ նուիրատուի մը երջանկութիւնը վայելել, եւ իրապէս վայելեց ալ: Ուրեմն հոս որոշապէս կը տեսնուի թէ Յիսուս իր աշակերտներուն ուշն եւ ուրուշը նուէրէն աւելի՝ նուիրատուին, գործէն աւելի՝ գործողին, արդիւնքէն աւելի՝ շարժառիթին, սիրտին կը դարձնէր: Իր ամենատես տէքով յօժար, անկեղծ ու համեստ սիրտ մը գտնելով՝ իրեւ օրինակ կը ներկայացնէր չուրջի ձեւապաշտ, ծիսամոլ ու կեղծաւոր ժողովուրդին, ու մասնաւորապէս զպրիւսներուն ու փարիսեցիներուն:

Բ.— Մեր յուճան Մենք ամէնա ալ ունինք մեր լուծանքը, զորս պէտք է տանք բարի ու օգտակար նպատակներու համար: Եթէ կարենանք մեր սիրտերուն մէջ լռեցնել ստորին շարժառիթներու վըլ-վըուկը ու մտիկ ընել անոր աղին թիւագրութիւններու ձայնին, մենք ալ կը զրոհենք թէ կարօտը կը քաշենք այն երջանկութեան՝ զոր կարելի է զգալ՝ մի՛ միայն աղին գործերու համար տալով, նոյնիսկ ու նուիրուելով: Այս հոգեկան պահանջ մըն է մեզի համար ալ, մենք ալ ունինք այդ մշտապատրաստ յօժարութիւնը: Գոյի, ազնիւ նպատակներու գնահատումը, բարեբարելու երջանկութիւնը՝ հոգեկան տկարութիւն մը, կամ հիւանդութիւն մը չեն: Անոնք մեր սիրտերուն ընդարդ թաղձանքներն են ու պէտք է զոհացում տանք անոնց. որովհետեւ անոնց յագեցումովը ա՛լ աւելի կը մեծնայ, կ'ազնուանայ մեր հոգին: Մենք ալ մեր լուծանքը տալու ենք անկեղծաբար, որովհետեւ կեղծ ու ստորին շարժառիթներ կրկին փնտսկոթին մեզ. նախ որ՝ արուածը, նոյնիսկ ուսածը կը կորսնցնենք, ու իբր երկրորդ

ու անդամաների կորուստ՝ մեր ազնուաւթիւնն ու անկեղծութիւնը կը կորսցնենք: Երեւալու, գովուելու համար արուած նուէր մը բուն մեր սպասած երջանկութիւնը չի բերեր մեզի. մեր պարծենկոտութեան յագեցումը աւելի՝ ցուցամով ու աւելի՝ ծիծաղելի կ'ընէ մեզ: Իսկ համեստութիւնը, իր կարողութիւններուն գիտակցութիւնը, եւ լաւագոյնը ըրած լլլատ. զգացումը շատ կարեւոր զգացումներ են մեր նուիրատուութեանց մէջ: Թէեւ մարդիկ յաճախ վարժ են մեծ գործերը մեծ մարդերէ ակնկալել, ու ամէն գործ իր արտաքին երեւոյթէն ու քանակութենէն չափել, բայց Աստուած այնպէս չընէր Սիրտերը քննողը սիրտերու համեմատ կը վարձատրէ, ու քոչոր սիրտով տուողը կը գնահատէ: Մեր յումաներուն հետ մեր սիրտերն ալ բերենք իբրեւ նուէր, մեր նպատակին հետ մեր բոլոր կարողութիւններն ալ տրամադրենք, ու այն ատեն պիտի տեսնենք թէ մեր լումաները օգտակար եղած են այն նպատակին որուն համար տրուած են, օգտակար եղած են նաեւ մեզի համար: Ու այդպէս, վայելած ենք տալու կրկին օրհնութիւնը: Քաջ գիտնանք թէ Վրիտանէութիւնը իր շինարար ու բարեպաշտ բոլոր գործերը կը պարտի այս աշխատ աշխարհի ոգիին աշխարհի վրայ յաւերժացումին: «Բարի է տալը քան առնուլը» կ'ըսէ Առաքելը: «Տուէք եւ պիտի արուի ձեզ», կ'ըսէ Երկնաւոր Վարդապետը: Այրի՛ն լուման, մե՛ծ է, հրաշագործ է ան. եւ իսկապէս երջանիկ են այն սիրտերը, որոնցմէ կը բխի այրիին լուման:

ԳՐԻԳՈՐԻՍ

## ՍԻՒՆԵԱՅ ԴՊՐՈՑԸ

Ն. (1)

ՍԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԻՒՆԵԱՅ

Հայ մատենագրութիւնն իր սկզբնաւորութեան թուականէն՝ յաջողած չէ կազ-

(1) Շար. 36րդ թիւէն:

մել գրական զանազան սեռերու շրջաններ. իր դարաւոր դոյութեանը մէջ միշտ միօրինակ ընթացքի մը հետեւելով բովանդակ գործունէութեան կեդրոնն ըրած է գրեթէ եկեղեցական դիտութիւնը, այնպէս որ մեծագոյն մասամբ եկեղեցական ու պատմական երկեր եղած են մեր Նախնեաց դարաւոր վաստակները. բանաստեղծութիւնն անգամ կրօնական երանգ մը չգեցած է միշտ:

Իրաց այս վիճակն անշուշտ իրաւունք չի տար ճշգրիտ եղանակաւ մը որոշելու զանազան շրջաններ՝ մեր միաստոր մատենագրութեան մէջ: Ոմանք, սակայն, երկու մասերու կը բաժնեն Հայ մատենագրութիւնը հին եւ նոր շրջաններով. Առաջինը մէջ կը գնեն 1. Անգիր մատենագրութիւն կոչուած հիթանոսական երգերը, 2. Գրաւոր մաս մը հայերէն գրերու գիտէն առաջ, եւ 3. Բուն գրաւոր մասը Մեսրոպէն սկսելով մինչեւ Յովհան Երզնկացի (ԺԴ. դար): Իսկ երկրորդը՝ նոր շրջանը ԺԴ. դարէն առնելով կը հասցնեն մինչեւ մեր օրերը: Գրական այսօրինակ բաժանում մը կամայական եւ անտեղի կը համարի Մատենագրութեան մեր վարժապետը՝ Դուրեան Նդիշէ Արքեպիսկոպոս, որովհետեւ բազմաճումն Սրբազանն իրաւամբ թէ՛ մատենագրական զօրաւոր պատճառ մը չի տեսներ ԺԴ. դարը ԺԴ.էն զանազանիլու, եւ թէ՛ բանաւոր չի նկատեր ԺԴ. դարու իւր շարունակութիւն համարել մեր ժամանակին երեւցած գրական նորագոյն շարժումը, որ աշխարհաբարի կամ արդի հայերէնի ճոխութիւնը (autorité) կ'ենթադրէ:

Ըստ մեզ, հրա մատենագրութիւն մը չունի գրական զանազան սեռերու շրջաններ կամ բարացուցական (caractéristique) ժամանակակէտներ, աւելի ուղիղ կ'ըլլայ առանձին բաժանումներով ի հանգէս բերել լեզուին զլսաւոր ժամանակակէտները, հիմնուելով լեզուի փոփոխ վիճակներուն քան մատենագրական յեղանակաւորումներու վրայ:

Այս տեսութեամբ Սիւնեաց Դպրոցն Հայ մատենագրութեան մէջ իր որոշ նկատ-

բազրով առանձին չըջան մը կը կազմէ :

Հեղինակը անոր քանակը քանակ է այն :

Ստոյգ է թէ մեր լեզուն իր մատենագրութեան առաջին ժամանակէն օտար ազդեցութենէ գերծ չմտայ, սակայն այդ ազդեցութիւնն առաջին ատիւն չկրցաւ բռնաբարել Հայ լեզուի ոգին, որուն կարելի եղածին չափ հաւատարիմ մնացին առաջին թարգմանիչները: Ապաքէն Սահակ Մեարտպեան զպրօքի վերաբերեալ թարգմանութիւններն իսկապէս Հայերէնի գրոյց կը կրեն, ոսոր ամենափայլուն ազդեցոյցն է Աստուածաշունչ մատենանը : Եզնիկի գրուածը, որուն յոյն աղբիւրներն ալ գրունուեցան, Հայերէն լեզուի տիպարն է ոսկեղարում: Ի մի բան այս Դպրոցը այնքան անեղծ պահեց լեզուին հարազատ կնիքը, որ հելլենագրութեան ներկայացուցիչներէն մէկը «անգէտ» կը համարի զանի իրենց «արուեստին» : (Խորենացի Գ. ԿԱ.) :

Հելլենագրութեան մեր լեզուին մէջ սեպականութիւնն է Սիւնեաց Դպրոցի գրական արտադրութեանց, Այս օտար լեզուի ուսումը եղծեց Հինքու ազնիւ ճաշակը նորերուն մէջ, եւ իսկական Հայերէնի պարզ ու յստակ շարադրութիւնը տակաւ յաղթանարուեցաւ Սիւնեաց աշակերտներու գրչին տակ Հելլենական ոճի արապետութենէն, եւ վերջապէս Սիւնեաց Դպրոցը, որ իր ծագմանէն (Ն. Գար) յունարէնի ուսումը խնամով կը մշակէր, եւ Սահակ Մեարտպի օրերէն իրեն յատուկ մտնաշնորհ մը կը համարէր մեկնութեան ու քաւ յմանութեան գործը (Ստի. Օրբէ.) : յունական բարդումներու եւ ստանական թարգմանութիւններու օտարոտի ճաշակին մէջ կեդրոնացուց գրական բուն արժէքը :

Այսօրինակ եկամուտ նորութիւններու առաջին շարժասիւթը փիլիսոփայական գիտութեանց պարապումներն եղան. եւ գիտելի է որ ընդհանրապէս կրօնական ոլորտէ դուրս գտնուող թարգմանական գրութեան հետ մէջ առաւելապէս մուտ գործեցին յունագրութիւնները, Ասի բնական երկնոյթ մ'էր թարգմանչութեան գործին մէջ, վառն զի Հելլենագրութիւնն ինք-

նին պիտի ծագէր, երբ թարգմանիչն ուղեր օտար բնագրին նախագաղութեան ձեւերն ամբողջովին պահել, բոռերուն չեղանքն զգացնել թարգմանութեան մէջ, գաղափարները ճշգրտապէս բացատրելու յատուկ դարձուածներն իւրացնել, եւ այս նպատակին հասնելու համար նոր բառեր իսկ գործնել :

Հելլենագրութեան շարադրութիւնը սեպական գրոյց մը տպաւորեց Սիւնեաց Դպրոցի Հայերէնին վրայ, եւ յայտնի խրթնարանութիւններով մեր պարզ ու յստակ լեզուին խանգարումն այդ Դպրոցի գործն եղաւ, հելլենագրութեան ճոխ կամ ներհուն ոճի պայման մը նկատելով :

Լեզուի այս շոյալումներէն շուտաւ, Թ. Գարու հեղինակ մը՝ Սիւնեաց աշակերտութենէն՝ կը սիրէր պերճարանել խրթն ոճերով եւ բառացի նկատումներով. նոյն իսկ չվարանեցաւ իբր անարժան գործ հաշակել Շապուհ Բագրատունիի (Թ. Գար) «Դեղջուկ բանիւ եւ ոչ ըստ քերթութեան հրահանգաց» յօրինած պատմական մէկ գրուածը, ուրկէ ինքն ալ օգտուած է(1) : Այս ֆերքողական հրահանգաց մոլութիւնը, որ կը կայանար ճարտասանական ձեւերու, դարձուածներու կամ աւելի ճիշդ խրթնագրութիւններու մէջ, յունագրութեան ոչ նուազ կ'աղաւաղէր, լեզուն անհասկնալի ընկու չափ, եւ Սիւնեաց Դպրոցին մէջ այդ ճիւղին գաղափարքն էր Մովսէս քերթողի (Է. Գար) յօրինած Պիտոյից գիրքը(2) :

Իբրեւ օրինակ կը բաւէ կարգաւ Հելլենագրան Դպրոցին զլիաւոր ներկայացուցիչներէն միայն երկուքին՝ Մովսէսի այս գործին յատկարանութեան առաջին մասը, եւ Ստեփաննոս Սիւնեացի թարգմանութիւնէն (Կիրդի Գիրք Պարապմանց) հատուած մը, հաստատապէս համոզուելու համար թէ ինչպէս օտար ձեւեր ու

(1) «Ոչ կարացեալ ըստ քերթողական հրահանգացն ընձեռել, սակայն ըստ իւրեւ ժամանակի գեղջուկ բանիւ բաւական տայ բեզ պատճառս» : (Յովհ. Կաթող Պատմ.) :

(2) Պիտոյից գրքին մէջ կը տեսնուի Նէ, աէ, զի՝ բանութներու իզական ձեւեր :

խրթնաբանութիւններ եղած են Հայ լեզուի յստակութիւնը: Չմոռնանք նաեւ ըսելու թէ այս կերպով մուտ գտած հազարաւոր նորակալմբաներու դործածութիւնը տեղի տուաւ բազմաքարդ ու շատ անգամ անխնայութեամբ թաւեր ձեւացնելու տենդի մը:

Այսպէս, հելլենաբանական թարգմանութեանց արդիւնքն են մեր լեզուին մէջ, զոր օրինակ վերծանութիւն (ἀνάγνωσις) բառը որ կը նշանակէ ընթերցումն եւ ձեւացած է յունարէն ἀνά = վեր եւ γνῶσις = ճանաչումն բառերէն. մակագութիւն (մակակագութիւն, ἐπιστήμη) որ կը նշանակէ գիտութիւն եւ ձեւացած է յունարէն ἐπί = վաւ եւ στήμη = կայութիւն բառերէն: Վերջապէս այս կարգին կը վերաբերին մեծագոյն մասը այն բառերուն որոնք կազմուած են ἐν = ն. ներ, ἐς = ներ. ներս, πρὸς = նախ, առաջ, ἀνά = վեր, κατά = ըստ, ὑς, μετὰ = յետի, παρὰ = յար, ἀπὸ = ապ, քաջ, ἀπὸ = եւր, ընդ. ὑπὲρ = զեր եւ ուրիշ նախամասնիկներով: Այսու ամենայնիւ ըսել չենք ուզեր երբեք թէ՛ մեր լեզուին մէջ ընդհանուր առմամբ ինչ որ խրթնութիւն կը համարուի, անպաճառ հետեւանքն է յունարէնի ազդեցութեան. ո՛չ, վասն զի բոլորովին տարբեր սրտածառներով խըրթնութիւն է՝ զոր օրինակ՝ Գրիգոր Նարեկացի (Փ. դար). թողունք որ արգէն այս երեւոյթն աւելի մատենագրական է քան լեզուական:

ԴՆԷԼ Ծ. Վ. ԴԱԼԵՄԲԵՍՐԵԱՆ

Դասըգիւղ

#### ԹԵԼԱԴՐԻՉ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

#### ԲՈԼՈՐ ՍԻՐՏՈՎ

Դործատէր մը իր գործարանին մէջ քովէ քով զբաղած երկու գործատրները՝ մասնաճիւղ ընելով բաւ ինծի:

— Թէեւ այս երկու գործատրներուն ալ նոյն օրավարձը կուտամ, բայց մէկը միւսին կրկնապատիկը կ'արժէ, որովհետեւ իր ըրած գործին մէջ բոլոր սիրտը կը

դնէ: Դործին համար միշտ արեւն է եւ հետաքրքրի: Միշտ կը ջանայ իր լուսագոյնը ընել: Բայց այդ միւսը, ընդհակառակն, իր օրավարձէն զատ բանի մը վրայ չի մտածեր. կ'ուզէ՛ դործէն փախուստ տալ երբ որ կրնայ, մանաւանդ երբ վըտահ է թէ իր թերացումը կրնայ անտեսուիլ: Անոր չեմ կրնար վստահիլ, միշտ քովը կ'ենալու եմ ու նայելու եմ. եթէ ոչ անկատար գործեր կ'արտադրէ ու այդ կերպով վնասակար կ'ըլլայ իմ գործարանիս վարկին:

— Շատ ազէկ, ուրեմն ձեր այդչափ զննատաճ չուզած գործատրը աւերի ի՞նչ կը շահի գործին մէջ իր բոլոր սիրտը դնելով, քանի որ երկուրին ալ նոյն օրավարձը կուտար:

— Առ այժմ ոչինչ, բացի այն դոհուսակութիւնէն զոր մարդ կը զգայ իր պարտականութիւնը կատարելով: Բայց մօտեւ գործատրապետի մը պէտք պիտի ունենամ, ու զայն պիտի ընտրեմ այդ գործին համար: Առ այժմ անոնց աշխատութեան մէջ վճարումի տեսակէտով իտ'ը չեմ կրնար գնել, որովհետեւ այդ իրենց գործաւորական ընկերութեան կանոնին հակառակ պիտի ըլլար: Բայց հակառակ այդ քմածին կանոններուն, բոլոր սիրտով աշխատող մարդ մը իր արժանի վարձատրութիւնը պիտի ստանայ պատեհ առիթով:

Երբ բարեկամս այս խօսքերը կը խօսէր՝ ես ալ ինքնաբերաբար քրիստոնեայ գործիչներու մասին խորհելու տարուեցայ: Աստուած ալ մեզմէ մեր սիրտերը կ'ուզէ, բայց մեզմէ քանինն՝ «բոլոր սիրտով» կը ծառայեն Անոր: Յաճախ հոգեւոր գործիչներուն անյաջողութեան զաղտնիքը հոս պէտք է փնտնել: Շատ անգամ տրամաբանութեան ու հոկտորութեան արուեստին բոլոր կատարելութեամբ պատրաստուած քարոզ մը չազդեր մեղաւոր հոգիներու վրայ: Ինչո՞ւ. — Որովհետեւ կեանքը — սիրտը — կը պակսի անոր մէջ: Ուրեմն, աշխատինք քոյր սիրտով:

(Թրգմ. Անդր. Կ)

## ՀԱՅ ՄԱՐՏԻՐՈՍԱԳՐՈՒԹԵՆԵՆ

## ՇՈՒՇԱՆ

ԳԶ. (20 Սեպտ.) Սրբոց կուսմանցն Մարիանեայ, Փեփրունեայ եւ Շուշանա Դստեր Մեծին Վարդանայ (Փրացոյց):

Իր անուանակից ձիւնափառ ծաղկին պէս որ միշտ սիրուն ու չքեղ քնքշութեամբ մը կը ծլի ու կը ծաղկի, նոյն ամբիժ ու անարատ գեղեցկութեամբ, մաքուր ու սրբապաշտ հաւատքի մը խորհրդաւոր ոլորտը մանկութենէն ի վեր զգուած ու չըջապատած էր Շուշանը՝ Տարօնի ձիւնապատ սարերուն վրայ, ուր յաղթական տիտանի մը պէս կը բարձրանար Մամիկոնեանց նահապետական բնակարանը:

Հոն ամէն ինչ խաղաղ ու հանգաւոր էր. կեանքի բոլոր պայմանները իրենց որոշ սահմանն ու օրէնքներն ունէին, ուր ոչ մէկ անկանոնութիւն կրնար վրդովել տիրող սքանչելի ներդաշնակութիւնը: Սրբտիրո՛ւ. մէջ ծածկուած քրիստոնէական սէրը հետզհետէ կ'ամրանար ու կը զարդանար, հողին բոցավառող հաւատքը իր սաղարթագեղ ճիւղերը կը տարածէր ամէն կողմ: Հոն սիրան ու հողին դրօսցնող զգոցումներն ու զաղափարները՝ միայն հաւատքի չուրջ կը գտնային, այն հաւատքին՝ զոր դար մը առաջ՝ Լուսաւորիչը այդ սարերուն վրայ անվահեր ու կոռիկ համարձակութեամբ մը քարոզած, եւ անոյեանի մը պէս պաշտպան կանգնած էր անոր ծաւալման, երբ քուրմերու եւ քրքումապետներու զօրաւոր խումբ մը գեռ զինուէր զօրութեամբ կ'ուզէր պայքար մղել այդ նորածիլ հաւատքին ջրատման եւ տնոր պաշտպան կանգնող Լուսաւորիչի դէմ: Երբ զէնքի տեղ խաչն ու Աւետարանը կը գործածէր, ու ոսղմադիտութեան տեղ ազօթքի ու հաւատքի զօրութեան ապաւինած՝ յաջողութեան ամէն կերպ երաշխաւորութիւն ունէր իր աչքին առջեւ իր ստանձնած դատին համար:

Արդարեւ յաղթանակը կատարեալ եւ

դեժ էր այդ համբաւաւոր նախաբարական Տան առջեւ. քուրմեր ու բաղիններ ջախջախուած, խորտակուած էին, եւ քրիստոնէութիւնը տիրած էր Սիփանէն մինչեւ Մասեաց ձիւնապատ զաղաթները: Եւ ահա ամբողջ դար մը անցած էր, երբ այդ իշխանական տան մէջ լոյս աշխարհ կուգար Շուշան Վարդենի, իր ազնուափայլ տոհմին շքով ու պերճանքով՝ թերեւս այնպիսի մէկ պահուն, երբ սպիտակափառ շուշաններու խորհրդաւոր ճերմակութիւն մը ձիւնապատած էր Տարօնի ամբողջ սարերն ու սարաւանդները, եւ հարկ էր որ նոյն մաքուր ամբոթութիւնը պահէր մինչեւ իր կեանքին վերջ, քանի որ իր սիրան ու հողին յանկուցանող ոչ մէկ հրապուրիչ պայման կը պակսէր այդ նահապետական տունէն, ուր միայն հաւատքն էր որ գերադոյն ազդեցութիւն մը ունէր, ու իրեն անուշ ու խաղաղ միջնորդարին մէջ արդէն երաշխաւորած էր ամբողջ ընտանիքի մը պայմանադրական երջանկութիւնը:

Մօտակայ Աշտիշատի շուրջ թերեւս դեռ կը ծխային Արամազդի եւ Վահագնի բաղինները խնկարկող Ատրուշաններու մնացորդները, ուրիշ ծուէն ծուէն բարձրացող ծուխերու քուլաները կրէք չէին կրցած բժաւորել Տարօնի կապուտադեղ հորիզոնը, ուր ծնողական քնքուշ աղապատանք մը ջերմ խանդաղատանքով մեծցուցած ու կատարելութեան հասցուցած էր Շուշան Վարդենին, կատարելութիւն մը որ կեանքի պայմանները յանկարծ կը փոխուին որոշ օրէնքի մը տակ, որ տիրապետող է միշտ, որուն պէտք է համակերպիլ, պէտք է յարգել զայն:

Ամբողջ ազգի մը արդար դատին համար իր կեանքը անձնուրարար ի սպաս զնող «Կարմիրն Վարդանի» — ինչպէս պիտի ըսէր Հ. Դ. Ալիշան — անդրանիկ դուստրն էր Շուշան(1): 451ի Մայիսը լացով ու

(1) Մեծն Վարդան միայն երկու ազգիկ ունեցած էր իր Դատիկ կնոջմէն. անդրանիկը՝ Շուշան զոր հարսնացուցած էր Վրաց Վազգէն իշխանին. իսկ երկրորդը՝ Վարդանուշ՝ հարսնութեան զացած էր իր քաջութեամբը համբաւաւոր Արշալիր Կամարականի որ մինչեւ վերջ հաւատարիմ զինակիցը մնաց Մեծն Վարդանի:

ու սուգով կը վերջանար իրեն համար, գոգցես այլեւս ոչ մէկ դարուն պիտի կշնար սուգի քողը վար առնել իր կուսական ամբիժ ճակատէն, քանի որ նոյն տարւոյ դարունը վերջ կը գնէր իր դիւցազն հօր կեանքին, անոր կարմիր արիւնով ներկելով Շուարշանի շուշաններն եւ Տղմուտի ալիքները, եւ այսպէս բոլորովին որբ թողնով զինքը, որ թերեւս քիչ մը առաջ արդէն զրկուած էր իր քաղցրիկ մայր Դսարիկէն:

Եւ հիմա աչքին առջեւ ո՛չ իշխանական ապարանքները արժէք մ'ունէին, եւ ոչ ալ արքայական պալատներն ու կեանքի ճոխ ու այլազան հաճոյքները կը հրապուրէին զինքը, քանի որ բոլորովին զրկուած էր իր անշուշտական ու ազնուատուն՝ ծնողքէն:

Շուշան կա՛ն ու խէն հարսնութեան դաջած էր Վրաց Աշուշայ Բգեշխին որդւոյն՝ Վազգէն իշխանին որ իր հօր յաջորդած էր իրրեւ թագաւոր ամրոցը Վրաստանի: Վազգէն նախապէս կրօնքով քրիստոնեայ եւ հաստատրիմ զինակիցն էր Մեծն Վարդանի, որ յաջողած էր իր քաջութեամբ պաշտպանել թէ՛ Հայաստանը եւ թէ՛ Վրաստանը միանգամայն Յաղկերտի անդիմադրելի ոյժին դէմ, եւ սարսափեցուցած էր Որմիզդի խնկարկող քմահաճ ինքնակալը: Բայց երբ Վարդան չկար այլեւս, երբ Հայոց զօրքերը ցիր ու ցան խոյս տուած էին Վրաստանի սահմաններէն, վախկոտ Վազգէն նախամեծար սեպած էր հայրենի հաւատքը աշխարհիկ ունայն փառքերու հետ փոխել, խոնարհելով Յաղկերտի առջեւ եւ ջերմ երկրպագու մը՝ դառնալով մազդեզական զենին: Յաղկերտ ներած էր Վազգէնի նախկին խիզախ յանձնութեան, քանի որ այլեւս ամէն կերպով վստահ էր թէ Վրաստան աւելի՛ խաղաղ պիտի թողու զինքը քան թէ Հայաստան, Վրաստան աւելի՛ դիւրաւ պիտի խոնարհի Սասանեան ճնշող քաղաքականութեան առջեւ քան թէ Հայաստան, որ թէեւ Աւարայրի ճակատամարտէն վերջ ընկճուած, բայց տակաւին կը խիզախէր իրեն դէմ՝ պայքարի թափաղակով փոխադրելով Խաղտեաց լեռներուն առջեւ:

Վրաստան Սասանեան թագին մէկ շողափայլ դճարը պիտի ըլլար, իսկ Հայաստան իր մարմինը կսկծեցնող փուշ մը, իր գրկիսուն վերեւ կախուած Դամոկլեան սուր մը՝ միշտ հատու ու սայրասուր:

Վազգէն օձիքն ազատած էր այլեւս, բայց միւս կողմէ Վարդանի հանդէպ ունեցած խորունկ երախտագիտութիւնը դառն տպերախտութեան կը փոխուէր հետզհետէ, ու զինքը միացնող ազգակցութեան ամուր կապը քայքայուած, իր բոլոր զգացումները ասելով թեմբ լեցուած, անվերջ պայքար մը պիտի բանալին ամէն անոնց դէմ որոնք՝ անքակտելիօրէն կապուած Վարդանի հետ՝ անոր անմահ յիշատակներովը կ'ապրէին: Վազգէնի արտործրագրին իրականացումը աւելի եւս հաճելի պիտի դարձնէր զինք յաջա Յաղկերտ երկրորդի:

Անմեղն Շուշան զրեթէ անդիտակ Տիգրանի մէջ կատարուած բոլոր իրադարձութիւններուն նկատմամբ, եւ իր անզուգական հօր մահուան ծանր սուգին տակ ճնշուած՝ կը յուսար թէ գոնէ իր սիրեցեալ ամուսինը անշուստ կը վերադառնար ասորւշաններու աշխարհէն, եւ ինքը անով կը մտիթարէր իր միացող սիրտը: Սակայն երազած զեղեցիկ ակնկալութիւններն ի դերեւ ելան, որովհետեւ Վազգէն վերագործաւ այս անգամ Վրացի զօրաց յաղթական քաղերդներու տեղ խառնիճաղանձ մոգերու եւ մոգպետներու խժալուր երգերովն ու աղօթքներովը, որոնք Որմիզդի եւ Արշնի փառքն ու մեծութիւնը կը զրուատէին: Այս արեւոյն ու տեսարանին առջեւ խեղճ Շուշան բոլորովին շուարած եւ կերպարանափոխուած վիճակ մը գտաւ:

Նոյն իրիկուն իշխանական խնջոյք կար Վրաց արքունիական պալատին մէջ. ոգեւորութիւնը մեծ էր, ուրախութիւնը անսահման: Զօրքերն ու զօրական, զրանիկներն ու պայազաւանները, մոգերն ու մոգպետները կ'ուռէին, կը խմէին ու Բագոսի՝ սեղանին կը խնկարկէին, որոնց կը խառնուէին երգեր ու աղօթքներ՝ ի սրտիւ Անուրամազայի եւ Սասանեան ինքնակա-

լուծեան Գալատիոն մէկ ծայրէն միւսը խնճոյքի սեղանը կ'երկարէր, միայն Շուշան տրտում երեւոյթ մը ունէր եւ չէր ուզեր մասնակցիլ խրախճանքի սեղանին, որ ամէն ինչ սրբապիղծ կը թուէր իր աչքին վայրկեանը վտանգաւոր էր: Վաղդէն կռահած էր ամէն ինչ, խափանցած էր Շուշանի հոգւոյն խորը. սակայն իր արքայիո հիւրերուն ներկայութեան չուզէր ծայր հանել: Միւս կողմէ Զուրի իշխանին թախանձանքով որ վրաց արքունիքին մէջ բաւական ազդեցիկ զիրք մը ունէր, Շուշան ստիպուեցաւ համակերպիլ մէկ կողմ թողլով իր բամբիջի թագն ու ծիրանին, միայն ընտրեց հեզութիւնն ու համբերութիւնը, որոնք իր առաքինու թեան շողափայլ զարդը կը կազմէին, եւ մասնակցեցաւ սեղանին՝ զխնայով որ իր կենաց օրհասակներ մօտ էր եւ շուտով պիտի միանար իր երջանիկ ծնողաց, անոնց հետ վայելելով երանաւէտ փութքը:

Խնճոյքը վերջացած էր: Վաղդէնի հիւրերը թմրած վիճակի մէջ իրենց սենեակները քաշուած էին. միայն Շուշան կը մնար Վաղդէնի մօտ. անոր խօսող ակնարկները շանթով սլաքներ կը մխէին ու բացողին արտին խորը, որ իր բորենիի ժանիքները սրած՝ մէկէն յարձակեցաւ իր անմեղ որսին, Շուշանի վրայ, եւ սկսաւ լսիտի հարուածներով անխնայ զարնել ու անտանելի չարչարանքներու ենթարկել հէզ Շուշանը: Գիշերը արդէն անցած էր. որով պիտի գիմէր խեղճ Շուշան, զո՞վ օգնութեան պիտի կանչէր. ստիպուած էր համակերպիլ իր բաղդին, եւ իր սեռակից երկու մարտիրոսահիւներուն (Սանդուխտի եւ Համագոսպուհի) պէս մարտիրոսութեան բաժակին մօտենալ եւ քամիլ զայն մինչեւ ցմբուր, ինչպէս քահանայ էր իր հայրը:

Նոյն գիշեր Վաղդէն անտանելի չարչարանքներու ենթարկելէ վերջ գծրախտ Շուշանը, վերջապէս իր զաղանային կիրքերը մարած գտնելով տարաւ Շուշանը Թիֆլիսի Մեակիի (կաթակնահար) լսանար նետեղ, ուր երկուր ասին աստուպիլէ վերջ, իր մարմինը հիւծող ու կրծող չարչարանք-

ներէն ուժասպառ, աշնան հիւանդ ծաղկի մը պէս թառամեցաւ: Երբ լսեց որ Վաղդէն բռնի կերպով իր գաւախները կռապաշտութեան կ'առաջնորդէ, բանտին բերդէն ինքզինքը վար նետելով ապառաժնորսն վրայ ջախջախուեցաւ, իր հօրը պէս յաւիտենական փառաց պսակը ընդունելով:

Մինչեւ 1860ին անյայտ էր Շուշանի գերեզմանը. թէ եւ նահատակի մը գերեզմանը կար Թիֆլիսի մէջ, բայց անգաղիք կը կարծէին թէ վրաց մարտիրոսի մը գերեզմանն է: Ազդասէր երիտասարդ մը քննելով կը հաստատէ թէ նոյն գերեզմանը Շուշան Վարդենիին է. բաւական վէճերէ ետք Հայերը կը արժանանան նոյն գերեզմանին, որ ուխտատեղի է այսօր:

Դ. ԳԱՊՊԷՆՃԵԱՆ

## ՊԱՄՓԻԼԻՈՍ ԵՒ ՅՈՒԼԻՈՍ

ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ

ԺԱՄԱՆԱԿՈՒԱՆ ՊԱՍՏՈՒԹԻՒՆ (1)

Ը.

Պամփիլիոս կը շարունակէր խօսիլ.

«Քրիստոնէական կրօնքին ուսուցումները գործնականին մէջ կիրարկելով՝ մարդ խոյս կուտայ այն բոլոր ոճիրներէն որոնք առաջ կ'ուզան հարստութիւններու յաւիշտակումէն կամ ստացուածքի անհաւատար բաշխումէն, քանի որ հարստութիւններու ամենամեծ մատը դիզուած կը մնայ մէկ քանիներու ձեռքին տակ: Մենք կ'անհետացնենք ոճիրին, զողութեան, սպանութեան շարժառիթը, պարգապէս մերժելով մեղի համար վար դնել մեր ապրուստին համար բացարձակապէս անհրաժեշտ եղածէն աւելի բան մը, կամ ուրիշներու թողլով այն բոլոր ազատ աշխատանքը զոր կրնայինք մենք կատարել: Հետեւապէս դիզուած հարստութիւնը մեր մէջ ոչ մէկը կրնայ փորձի ենթարկել, քանի որ խիստ հազուադէպ է որ մենք ունենանք մէկ օրուան մը մէջ մեր ասլորուստին համար անհրաժեշտ եղածէն աւել:

(1) Շար. 22րդ Թիւն սկսեալ:

լի բան մը : Յուրաքանչեւ անօթութեանն յուսահատութեան մղուած մարդ մը ամէն ժամանակ պիտի կրնայ մեր քով գտնել պատառ մը հաց եւ կտոր մը հագուստ , որով այլեւս պէտք չպիտի ունենայ բնականութեան դիմելու՝ ատենք հայթայթելու համար : Հետեւապէս մեզմէ հեռու կը փախչին հարստութեան եւ կողոպտութիւն տալու ոճրագործները , մինչ կեանքի պայքարին գլխաւոր զոհերը կուզան մեզի՝ ընդհանրելով մեր հաւատքը , կը լքեն իրենց կեանքի յոռի ընթացքը , եւ հետզհետէ կը դառնան օգտակար աշխատաւորներ , որ ուրիշներու նման մարդկութեան հասարակաց բարեօրէն համար կը դործեն :

«Ոճրագործներու տարբեր դասակարգ մը կը կազմեն այն մարդիկը , որոնք բուն կիրքերու եւ մօլութեաններու ենթակայ են , ինչպէս խաղամոլութիւնը , ագահութիւնը , ցոխութիւնը , հպարտութիւնը , բարկութիւնը , ատելութիւնը եւ այլն : Օրէնքները չեն կրնար բնաւ արգիլել այս տեսակ ոճիրները : Զանոնք դործելու պատրաստակամ անհատ մը անասնական անպատասխանատուութեան մը մէջ կը զրտնուի , բացարձակապէս զերծ ու եւ թաթոյական կաշկանդումէ : Կոյր է , կիրքերը կ'առաջնորդեն իրեն , եւ իր դործերուն հետեւանքները կ'ընկու անկարող կը զրտնուի : Խոչընդոտները իր զայրոյթի բոցն արծարծելու միայն կը ծառայեն : Եւ ճիշտ այս պատճառով , օրէնքները բացարձակապէս անօգուտ են այս կարգի ոճիրներու ջնջման համար : Բայց մեր մեթոտով կը յաջողինք անոնց բացարձակ եւ արգիւնաւոր բուժման մէջ : Մենք կը հաւատանք թէ մարդ եթէ սեղի տայ իր կիրքերուն , երբեք չի կրնար կատարեալ դոնացում գտնել եւ կեանքի նպատակին հասնիլ : Հետեւապէս մենք կը փորձենք զսպել , սանձահարել մեր կիրքերը՝ աշխատութեան եւ սիրոյ նուիրում կեանքով մը , եւ այս կերպով զարգացնել մեր անձին մէջ զրտնուած հոգեկան ուժն եւ մեծութիւնը : Որքան աւելնայ մեր թիւը , նոյնքան աւելի ծաւալ եւ խորունկ հիմ պիտի գտնէ մեր հաւատքը՝ սիրտերու մէջ , եւ նոյն համե-

մատութեամբ պիտի նուազին ոճիրները :

«Լերջապէս ոճիրներու ուրիշ դասակարգ մըն ալ կայ , որուն շարժառիթն է իր նմաններուն օգնելու ներքին վեհանքն բաղձանքը : Ամբողջ ազգի սառնապանքներն ամօքելու այս բաղձանքը , օրինակի համար՝ կը մղէ կարգ մը մարդիկ — զորս դաւադիրներ կը կոչեն — սպաննելու բռնակալ մը՝ իրենց հայրենիքն ազատելու համար : Այդ ոճիրը յառաջ կուգայ այն սխալ համոզումն թէ մարդ կրնայ չարիք դործել՝ եթէ անկէ բարիք յառաջ պիտի գայ : Եւ այս ոճիրներուն պատիժն ենթարկուելով՝ փոխանակ դանոնք ջնջելու , ընդհակարակն աւելի՝ կը բազմապատկէ եւ յաճախապէս կ'ընէ : Այս ոճրագործներուն ամենամեծ մասը , — եթէ անկեղծ են , — պատրաստ կը գտնուին իրենց բոլոր ստացուածքները լքանելու , հասնելու համար այն նպատակին որուն կը ձգտին , առանց ընկճուելու Վստանգին առջեւ , առանց սեղի տալու իրենց հանգաւոր դժուարութեաններուն : Հետեւապէս , պատիժի երկիւղը չի կրնար վարկեալ մը իսկ վարանումն ենթարկել զիրենք : Ընդհակառակն վտանգը կը խանգարանէ զիրենք , կ'աւելցնէ իրենց քաջութիւնը : Տառապանքը դանոնք մարտիրոսներու աստիճանին կը բարձրացնէ , ամբոխին համակրութիւնը կը վաստկեն անոնց , եւ ուրիշներուն ալ քաջալեր կ'ըլլայ՝ անոնց օրինակին հետեւելու : Այս իրողութեանց կը պատահինք բոլոր մարդկութիւններու պատմութեան մէջ :

«Մենք , Քրիստոնեաներս , համոզուած ենք որ չարիքը ա՛յն ատեն միայն պիտի դադրի դոյութիւն ունենալէ , երբ բոլոր մարդիկ հասկնան թէ անիկա ոչ մէկուն երջանկութիւն պիտի առնէ , այլ զժգախտ պիտի ընէ ամէնն ալ : Ընդունելով հանգերձ քաղաքական ոճրագործներու դործած սխալը , հարկադրուած ենք գովելու անոնց անկեղծութիւնն եւ անձնութեան իրենք : Ահա՛ այս պատճառով մենք կը մօտենանք անոնց , որովհետեւ՝ դաւապարտելով հանգերձ բռնութիւնը՝ մենք ալ կը հետապնդինք միեւնոյն նպատակին , որ ոչ այլ ինչ է , եթէ ոչ բոլոր մարդոց ազատա-

գրու մը : Անոնք զմեզ իրենց թշնամի չեն նկատեր, այլ իրենց չափ անկեղծ եւ բարիքի հետամուտ անձեր : Ասոր հետեւանքն այն կ'ըլլայ որ անոնցմէ չատեր մեզի կուգան՝ երբ համոզոււմ գոյացնեն թէ խաղաղ աշխատութեան եւ տեւական համակրութեան նուիրուած կեանք մը՝ որ ուրիշներու երջանկութիւնն ունի իրեն նպաստակ, ստուգիւ անհամեմատ կերպով առաւել օգտակար է ամբողջ մարդկութեան, եւ իրենց վաղանցուկ եւ արիւնտ քաջագործութիւններէն աւելի գեղեւորին դործ մը ի գլուխ հանելու կը յաջողի : Ստուգիւ, այն դաւադրողները որոնք մեզի միացած, մեր գաղափարներն ընդգրկած են, մեր համայնքին ամէնէն զործօն եւ անձնուէր անդամներն են :

«Կը յուսամ որ միտքդ հիմա բաւական լուսաբանուեցաւ, Յուլիոս, անձնապէս որոշելու համար թէ չարին արտայայտութեանց դէմ ո՞վ աւելի՝ յոյժողութեամբ կը պայքարի, եւ ո՞վ աւելի արդիւնաւոր կերպով կը նպաստէ զայն քննելու : մենք, քրիստոնեաներս, որ հոգեկան կեանքի վայելքներն ու հաճոյքները կը քարոզենք ու կը բացատրենք, մենք, որոնց միակ զէնքը կը կաղմին մեր նմաններուն հանդէպ սէրն եւ անձնութիւնը, թէ ձեր կառավարիչներն եւ գաղաւթները, որոնց առած վճիռներն ու պատիժները ոճրագործները զրդեղութեամբ կը ծառայեն, եւ զանոնք կը մղեն աւելի՝ բուռն, աւելի՝ սոսկալի միջոցներու դիմելու :

— Երբ քեզ մտիկ կ'ընեմ, պատասխանեց Յուլիոս, ինծի այնպէս կուգայ թէ բացարձակապէս քու կողմդ է իրաւունքը : Բայց, խնդրեմ, ըսէ՛ ինծի, Պամփիլիոս, ինչո՞ւ ուրեմն կը հալածեն զձեզ վայրի գաղաններու նման, ինչո՞ւ կը սպաննեն զձեզ : մէկ խօսքով, ձեր վեհանձն եւ մարդասէր վարդապետութիւնը ինչո՞ւ ձեզի դէմ այսքան բուռն միջոցներ ձեռք առնելու անիթ կուտայ :

— Այս առերեւոյթ հակասութեան աղբիւրը մեր մէջ չէ, այլ մեզմէ դուրս : Բիշ առաջ կը խօսէի կարգ մը բռնութեանց վերայ, զորս Պետութիւնը եւ մենք՝ Բրիտ-

տոնեաներս ալ ոճիր կը նկատենք : Կ'ակնարկեմ այն բուռն ձեռնարկներուն զորս կը գատապարտեն իւրաքանչիւր երկրի մէջ, զործադրուող օրէնքները, որոնք կը փոփոխին իւրաքանչիւր կառավարութեան ձեւին համեմատ : Բայց այդ օրէնքներէն վեր կը գտնուին ուրիշ օրէնքներ, որոնք միեւնոյնն են ամբողջ մարդկութեան համար, եւ քանդակուած են մարդոց սրտին մէջ : Մենք՝ Բրիտանեաներս՝ այս աստուածային եւ տիեզերական օրէնքներուն կը հնազանդինք, եւ մեր վարդապետին խօսքերուն, կեանքին եւ ուսուցման մէջ կը տեսնենք այդ միեւնոյն օրէնքներուն ամէնէն ճշգրիտ, ամէնէն պայծառ, ամէնէն գեղեցիկ եւ ամէնէն վսեմ արտայայտութիւնը : Ժիշտ այս պատճառով է որ կ'այպանենք եւ ոճիր կը նկատենք բռնութիւնը, ինչ ձեւի տակ ալ ըլլայ, երբ կը հակասէ Բրիտոսի պատուէրներուն, որոնք մեզի համար նոյնիսկ Աստուծոյ օրէնքն են : Մենք կ'ընդունինք թէ մեր ապրած երկրին քաղաքային օրէնքներուն պարտինք հնազանդիլ, ու եւ է անկարգութիւն յառաջ չբերելու համար : Բայց ամէն բանէ վեր կը բռնենք Աստուծոյ օրէնքը : Ան կ'առաջնորդէ մեր խիղճն եւ մեր բանականութիւնը, եւ հետեւապէս մենք պիտականա՞նք օրէնքներուն միայն կրնանք հնազանդիլ, որոնք չեն հակառակիր Աստուծոյ օրէնքներուն : Մենք Կիսարի կուտանք ինչ որ Կիսարինն է, բայց պարտաւոր ենք Աստուծոյ ընծայել բոլոր ինչ որ Աստուծոյ կը վերաբերի : Այն ոճիրները որոնցմէ կը ջանանք խոյս տալ եւ զանոնք քննել, մի՞ միայն մեր ծնած եւ ապրած երկրին օրէնքներուն հակառակունքները չեն, այլ՝ ամէն բանէ առաջ՝ ու եւ է բռնաբարում Աստուծոյ օրէնքին, տիեզերական օրէնք որ կը պատշաճի մարդկային բոլոր ցեղերուն եւ ազգերուն : Հետեւապէս, պատեւաբար զոր մենք կը մղենք ոճիրին դէմ, աւելի՛ հզօր է, աւելի՛ ընդարձակ, եւ աւելի՛ իրական, քան այն պայքարը զոր կը մղեն ձեր օրէնքները :

ԼԷՈՆ ԹՈԼՍՏՈՅ

(Շարունակելի)

# ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ նոր լուրեր կը հասնին դաւաճէն : Բաղէշի առաջնորդ Տ. Սուրէն Ծ. Վ. հեռագրով կը գումէ. «Ուճիրներն սկսան, եւ այս կարգէն ըլլալով Լեւոն անուն անձ մը սպաննուեցաւ խուժ-դուժ կերպով : Դիւղերը սարսափի մէջ են. անմիջական կարգադրութիւն մը կը խնդրուի» : Արմաշի փոխ-վանահայրն ալ կը գրէ թէ «վանքին անտառին վերաբերեալ վէճը վտանգաւոր հանգամանք առած է. չըջակայ Թուրքեր ամէն օր 50—60 սայլ մեծաքանակ փայտ կը կտրեն, եւ կառավարութիւնն անտարբեր կը գտնուի այս անիրաւ աւարառութեանց հանդէպ» : Պատրիարքարանը, այս եւ ուրիշ խնդիրներու համար զիմուսները կը շարունակէ միշտ :

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Միաբանական ժողովը որոշեւ Պատրիարքական ընտրութիւն կատարել Հոկտ. 14ին, եւ մինչեւ նոյն օրը բոլոր միաբաններուն քուէները պահանջեր է, ընտրելոց ցանկերը պատրաստելու եւ Ազգ. ժողովին զրկելու, վերջնական ընտրութեան համար : Քուէարկութեամբ ընտրուել է նոր Տնօրէն-ժողով մը : Վերջին լուրերէ գոհութեամբ կը տեղեկանանք թէ խաղաղութիւնը վերահաստատուել է վանքին մէջ :

ԻԶՄԻՐԵԱՆՑ գրական յանձնաժողովը իր զինանը կազմեց՝ Ատենայիտ ընտրելով Վսեմ. Գաբրիէլ ԼՖ. Նորատունկեան, եւ Ատենադպիր Տ. Գրիգորիոս Ծ. Վ. Պալազեան : Յանձնաժողովը որոշեց յառաջիկայ տարի մրցանակաբաշխութիւն կատարել, կտակին համապատասխան նիւթերու համար : Յանձնաժողովին իրաւասութեան տակ զստուող Ղալաթիոյ Մատենադարանը պիտի փոխադրուի Բերայի Արհեստանոցը :

ԿԻԼԻԿԻՈՅ Ս. Կաթողիկոսը Պատրիարքարանին պատասխանած է թէ կարելի չէ կիլիկեան ու եւ է կաթսկոպոսի մասնակցիլ Ամենայն Հայոց Հայրապետի ընտրութեան, ցորչափ Կիլիկիոյ միաբան կաթսկոպոսներու իրաւունք չի տրուիր էջմիածնի կաթող. թեմերուն մէջ պաշտօն վարելու :

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿ. ԵՒ ԱՄԵՐԻԿԱԶԱՅԵՐԸ. — Յրէզնօի, Յատուլըրի եւ Եղեմի եկեղեցիներու Հոգաբարձութեանց կողմէ հանրապիր մը հասած է Պատրիարքարան, որով կը ներքողեն Տ. Մուշեղ Եպիսկ. զործունէութիւնը, չեղտելով մասնաւոր

րապէս թէ Ամերիկայի այլեւայլ քաղաքներուն մէջ հոգեւոր հանդէսներով եւ քաղաքներով ժողովրդեան միաբեր կը շինէ եւ ազգ. կեանք կ'արծարծէ սոսանց ու եւ է կուսակցութեան ինպատկ կամ աննպատկ զործելու. այլ Հ. Բ. Ը. Միութեան զորուալիքը կ'ընէ, քանի որ այս մարմինը ճանչցուած է թէ՛ ընդհ. ազգէն եւ թէ Պատրիարքարանէն :

ԿԱԹՈՂ. ԸՆՏՐՈՒԹԵԱՆ աշխարհական պատուիրակները կ'ընտրուին հետզհետէ՝ վանքն ընտրուած է Բագու բնակող Պ. Յովն. Բաջալունի. բայց իբր եկեղ. պատգամաւոր չպիտի կրնայ երթալ Տ. Յովնէփ եպ. Սարաճեան, որ Պատրիարքարանէ կը խնդրէ յարմար եկեղեցական մը ընտրելու — Ռոստոմայն ընտրուած է Թովմաս ԷՖ. Սահակեան. իսկ եկեղ. պատգամաւորն է առաջնորդ Տ. Գէորգ Ծ. Վ. — Բաբերդէն, առաջն. տեղապահ Տ. Տիրայր Ծ. Վ. կը գրէ թէ յառաջիկայ շաբթու Գաւառ. ժողով գումարելով պիտի ձեռնարկէ Կաթող. Պատգամաւորի ընտրութեան — Նիկոմիդիայէն պատգամաւոր ընտրուած է Աղասի ԼՖ. Աղասեան, Առաջնորդը կը խնդրէ որ եկեղ. պատգամաւորը Պատրիարքարանը որոշէ :

ԱԶԳ. ԺՈՂՈՎՆ անցեալ ուրբաթ օր գումարուեցաւ, առանց սակայն կարենալ մեծամասնութիւն կազմելու, որով չկրցաւ կատարել Կաթող. պատգամաւորի ընտրութիւնը, որ օրակարգի Ա. խնդիրն էր. Իր կարեւորագոյն որոշումն եղաւ գործադրութեան զինել ներքին կանոնադրի ցարգ չգործադրուած մէկ տրամադրութիւնը, որու համաձայն առանց բանաւոր պատճառի, ասեմա'ան չըջանի մը երեք անբաւական նիստերուն քացակայող երեսփոխան մը կը հրաժարեցուցուի, ազգին գործերն ետ մնալու պատճառ ըլլալուն համար :

ՂԱԼԱԹԻՈՅ Խնամակալութեան անդամակցութեան կոչուեցան Ռուբէն Զարգարեան, Ղազարոս Մեծատուրեան եւ Օննիկ Պոյնաքեան ԼՖ.ներր :

ՎԱՆՕՐԷԻՑ ԽՈՐՀՈՒՐԴԸ կազմուեցաւ հետեւեալ կերպով, — Տ. Հմայեակ Արքեպ. Դիմաքսեան, եւ Գեղամ Տ. Կաթսկոպեան, Մարկոս Նաթանեան, Մելքոն Կիրճեան, Շարամ Գաղանճեան, Հայրկազուն Պէկեան եւ Թորգոմ Պոյաճեան ԷՖ.ներր :

ԱՌԱՋԵՆՈՐԴԱԿԱՆ ընտրութիւն կատարելու հրահանգ տալ որոշեց Խառն ժողովը անցեալ շաբթու Արաբկիր եւ Սամսոն, ընտրելոց ընդհ. ցանկեր զրկելով :

## ՕՍՄ, ԱՌԵԻՏՐ, ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ռացում Հայկ. անդամիկ դրամասան

Շարաթ օր իր զործանութեանց սկը-  
սաւ Հայ բաժնեւէրիւրէ կալմուած Օսմ.  
Առեւտր. Ընկերութիւնը՝ Գաթըրճը օղու-  
խան հաստատուած իր դրամանկաներուն  
մէջ՝ Այս առթիւ բացման հանդէս մը կա-  
տարուեցաւ, ի ներկայութեան Հայ Առեւ-  
տրական դասակարգի ներկայացուցիչնե-  
րուն եւ օտար անձնաւորութեանց: Սրահը  
զարդարուած էր Օսմ. դրօշներով եւ դալի-  
նիներով: Տ. Գրիգորիս Արքեպ. Յովհան-  
նէսեան որ կը նախագահէր՝ ի դիմաց Տե-  
ղապահ Ս. Հօր, ջերմ մաղթանքներ բրաւ  
նորահաստատ առեւտր. սոյն դրամատան  
գործանութեանց արդիւնաւորման համար,  
եւ խօսքը վերջացուց՝ բարեմաղթութիւն-  
ներով Վեհ. Կայսեր, որուն ծննդեան տա-  
րեդարձին օրը կը կատարուէր այս բա-  
ցումը: Յետոյ Տ. Գրիգորիս Արքեպ. հաջ-  
հանգիստ կատարեց հանգիստաւորապէս  
կրօն. այս պաշտամունքէն յետոյ, ընկերու-  
թեան Վարչ. Խորհրդոյ ատենապետ Գէ-  
որգ Էֆ. Աւանեսեան ղեղեցիկ բանախօսու-  
թեամբ պարզեց այս Հաստատութեան հիմ-  
նարկութեան նպատակը, յիշելով անցեալ  
ժամանակներ՝ ամէն երկրի մէջ Հայոց  
կարեւոր դերը վաճառականութեան մէջ,  
եւ չեղանելի նոր ժամանակներու մէջ գոր-  
ծելու նոր մեթոտներ ընդգրկելու պէտքը՝  
մասնաւորապէս ընկերութիւններու կազ-  
մութեամբ: Յետոյ խօսեցաւ ընկերութեան  
իրաւագէտ-խորհրդական Ռուբէն Էֆ. Փա-  
փաղեան: Բանախօսութիւններէն ետքը  
ներկաներն հրաւիրուեցան ճոխ շքասեղա-  
նի մը շուրջը:

Ջերմապէս կը շնորհաւորենք այս նոր,  
եւ երկրին ու ազգին համար հաւասարա-  
պէս օգտակար ձեռնարկը, որուն կատար-  
եալ յաջողութիւն եւ արդիւնաւոր գոր-  
ծունէութիւն կը մաղթենք անկեղծօրէն:



## ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Տարւոյս սկիզբը (7րդ քիւրդ) ծանուց-  
ուած նուիրասնութիւններէն զաւ, շնոր-  
հակաշնորհաւք կը ծանուցանեմք թէ Պոչ-  
սոյ եւ արասասնանի մեջ կարգ մը բա-  
րեւեր անձնաւորութիւններ տարեկան մեյ-  
մեկ Տանաթի նուիրասնութիւն ըրած  
են, զորս համախմբելով այսօր կը նրասա-  
րակեմք զոհուեակութեամբ:—

Ամեն. Տ. Եղիշէ Ս. Արքեպ. Դուրեան՝ Սե-  
րաստիոյ ազգ. որբանոցին:

Դեր. Տ. Գէորգ Ծ. Վ. Ասլանեան՝ Առաջնորդ-  
Ռոտուդոյի՝ Բիւկեանի Ազգ. Վարժարանին:

Ազն. Տիկին Եւգենէ Նազգաշեան՝ Խազիւղի  
Դալփաեան աղջկանց որբանոցին:

Ազն. Օննիկ Էֆ. Ալալեմեան՝ 2 օրինակ՝ մին  
Ատանայի Ազգ. Վարժարանին, եւ միւսը Տէօրթ-  
եօլի Ազգ. Որբանոցին:

Ազն. Յ. Կարապետ Նորարք՝ Հաճնի Ազգ.  
Վարժարանին:

Բարեւէր ազգային մը, 2 օրինակ՝ մին Կոտուց  
եւ միւսը Լիւս Անապատներուն (Վան):

Ազն. Երուանդ Էֆ. Պէյազմեան՝ Դպրոցասէր  
Տիկնանց Վարժարանին:

Ազն. Յր. Էֆ. Կիւլպէնկեան (Ամերիկա)՝  
Հաճնի Ազգ. Որբանոցին:

Ազն. Խաչիկ իւան Սարաճեան (Դուրեթ)՝ 2  
օրինակ՝ մին Ջէյմուսի գրադարանին եւ միւսը  
աղբատիկ ուսանողի մը:

Ազն. Սեդրաք Էֆ. Դաւիթեան (Գահիրէ)՝ Ակ-  
նայ Ազգ. Վարժարանին:

Ազն. Ն. Մ. Աղազարմ Էֆ. (Գահիրէ)՝ Արաբ-  
կիւրի Ազգ. Վարժարանին:

Ազն. Ստեփանեան եղբ. (Գահիրէ)՝ Աշուտի  
Ազգ. Վարժարանին:

Ազն. Յր. Էֆ. Գամպէրեան (Մանչեսթըր)՝ Մար-  
գուանի Արթ. Տ. Մամրէ քիչ. Թեփիկեանի:

Ազն. Մ. Նալպանտեան Էֆ. (Տնօրէն Կեդր.  
Վարժարանի)՝ Մարգուան Արթ. Կրօնիգէս քիչ.  
Նալպանտեանի:

Բարեւէր ազգային մը (Ամերիկա)՝ 2 օրինակ՝  
Վանայ Յայնկոյս Ձորի Հայոց եկեղեցիին եւ  
Աւետ. Հայոց եկեղեցիին:

Ազն. Յարութիւն Էֆ. Մօստիքեան՝ Կեսարիոյ  
Ս. Կարապետ Վանուց:

Արտօնատէր ՀՄԱՅՆԱԿ ԲՆՆՅ. ԵՔՍԵՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ՀԱՐՄԱՅՐ ԲՆՆՅ. ԿԵՋՈՒՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆ Տ. ՏՕՂԱՄԱՅԵԱՆ

# ARMENIA

Ասկէ առաջ ստացեր էինք ARMENIA-ի Յունիս եւ Յուլիս համարները, որոնք Ամերիկեան Հանդէսի մը վայելչութիւնը եւ գեղեցիկ պարունակութիւնը ունէին: Կողքի զարդանկարը, յօդուածներու կրցումը լուսանկարները մասնաւոր գեղեցկութիւն մը կուտան ARMENIA-յին, որ հիմա 36 երեսներէ կը բաղկանայ՝ փոխանակ առաջուան 24ին:


Ստացանք նաեւ Օգոստոսի թիւը, որ կը պարունակէ խիստ հետաքրքրական ու նշանաւոր վէպ մը «Լընտըն Թայմզ»-ի խմբագիրներէն Frederick Harrison-ի զրոյէն: Տաղանդաւոր Անգլիացի զրագէտը այս վէպով կը ջանայ նկարագրել Հայ թագաւորներուն խաղցած նշանաւոր գերը

Քիւզանդական կայսրութեան մէջ՝ տառներորդ դարուն: Ամէն Հայ կարդալու է այս վէպը, տեսնելու համար թէ ինչպէս Չաչկիկ ու Նիկոֆոր Հայագն կայսրին ամբողջ Քիւզանդական տշխարհը կը սանձաւարէին:

Միւս աշագորաւ եւ գեղեցիկ յօդուածներուն մէջ հարկ է յիշել մասնաւորապէս Miss Alice Stone Blackwell-ի հոսկապ թարգմանութիւնը Սիւսմանթօյի «Ասպն» տին երգին:

ARMENIA-ի տարեկան բաժնեդինն է մէկ տալէր Ամերիկայի, սոյէր ու կէս արտասանմանի համար՝ քսոյարձակապէս կանխիկ:

Դիմել՝ Editor of Armenia,  
P. O. Box 209, M. S. S.  
New York City



## ՏՊԱՐԱՆ

ՏԻԳՐԱՆ

ՏՅՂՐԱՄԱՃԵՄՆ

Հիմնուած 1899ին Բաւրիցի մէջ

ԳՈՒԻՍ, Սուրբ-Համամ, Մօլա-Թաւր



Ամէն տարեկան իր թաղմագոյն սպազորոթին, շինդ եւ պարզ, մաքուր, խնամեալ եւ ամանագիւն:

ՅԱՅՐԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՆԻ  
ՅԱՅՐԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՆԻ  
ՅԱՅՐԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՆԻ

## ՍՏԱՑՈՒՄԻ ԳԻՐՔԵՐ

ԱՐԴԻ ԲԱՐՈՅԱԴԻՍՏԻՔԻ ԹԻԻՆԸ . —

Գրեց Տիկին Արշակունի Թեոֆիլ: — Պրան-  
սացի հոյակապ հեղինակին՝ ժիւլ Բայօի  
բարոյագիտական վերջին գործին հետեւո-  
ղութեամբ եւ ուսմանց ամենանոր գրու-  
թիւններու ընդգրկումով պատրաստուած  
ընտիր դասագիրք մը, որ խնամոտ հոգա-  
ծութեամբ պատշաճեցուած է հայ կեան-  
քին՝ իւրաքանչիւր ստորաբաժանումէ հետք  
աւելցուելով ընտիր պատմութիւններ, գե-  
ղեցիկ մտածումներ եւ ընթերցումներ,  
բարոյագիտական դասերը աւելի՛ ուժգին  
ապստորելու համար աղուն մարին աւ-  
սրաին մէջ: Ջերմապէս կը յանձնարարուի  
Ազգ. Վարժարաններու վարիչներուն,  
Հրատարակութիւն Յովն. Գրընճեան զրա-  
սան: Դին 8 զրշ: 3—1

ԴԱՍԷՆԹԱՅԻ ԶԱՅՆԱԿԱՆ ԵՐԱԺԸՇ-  
ՏՈՒԹԵԱՆ. — Դիւրուսոյց մեթոտով, պատ-  
րաստեց ծանօթ ջութակահար Ահարոն Էֆ.  
Մըսրիշեան: Կը բովանդակէ եւր. ձայնա-  
գրութեան հիմնական կանոնները, զիւրմ-  
բժնելի բացատրութիւններով եւ գործ-  
նական հրահանգներով: Ասոնց վրայ աւել-  
ցուած է Բ. մաս մը՝ հայկական նոր եր-  
գերու, միաձայն, երկձայն եւ եռաձայն  
դաշնաւորուած՝ դաշնակի կամ օղկի ընկե-  
բակցութեամբ: Հրատարակութիւն Վ. եւ  
Պ. Ջարդարեան եղբ. զրատան: Դին 5 զրշ: 3—1

## Մ. ԹԱԳԻՈՐ ՊԱԼՃԵԱՆ

### ՓԱԿԵՂԱԳՈՐԾ

Երկար ժամանակէ ի վեր ծանօթ է իր  
հարտարութեամբ: Կը շինէ եւ կը պատ-  
րաստէ գեղեցիկ սաղաւարտներ, եւ մա-  
նանգ փակեղներ՝ ընտիր թափշի, աւ-  
ուիի, սաթէն տը լիօնի եւն. վրայ: Դի-  
ները գոհացուցիչ:

Դիմել Ղալաթիա, Ս. Լուսաւորիչ Ե-  
կեղեցի, ուր կը գտնուի միշտ:

5—5

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԴԵԱՐ ԵՐԳԱՐԱՆՈՒԹԵԱՆ

ՀԱՅ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՑ

Պատասխան

### ԿՐՕՆԻԴԵՍ ՔԶՆՑ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

Կարեւոր պակաս մը կը լեցնէ եկեղեց-  
ւոյ երաժիշտ մանուկներու համար, որոնք  
ասոր գործածութեամբ ա՛լ պէտք չպիտի  
ունենան ժամագրքի, տաղարանի, շարա-  
կանի, փոխասացի եւ այլ յարակից տեւ-  
րակներու եւ քիւլքերու: Տէր եւ հրատա-  
րակիչ Աղեփաւնոր Եօղիասշեան: Տպ. Մար-  
զուան, «Կիւթնպէրկ» տպարան, 1911:  
Դին 7 զրշ. (մէճիտ 19էն): Բօսքի ծախք  
30 փրշ: 3—3

## ԳԻՆ 1 ՂՐՈՒԾ

Տպագր. Տ. ՏՕՂԱՄԱՆԵԱՆ

Սուրբան-Հանաւ Մօղա-Թաշը, Թիւ 16

Կ. ՊՈԼԻՍ